**ՀԱՍՏԱՏՎԵԼ Է**
«Մարքեթինգի Հայկական Ասոցիացիա»
Հասարակական Կազմակերպության
հիմնադիր ժողովում

«14» նոյեմբերի 2002թ.

Նախագահ՝ ________________ /Ա. Նավասարդյան/

**ԳՐԱՆՑՎԵԼ Է**
Պետական ռեգիստրի կողմից
«10» 12 2002թ.
գրանցման համարը՝ 211.171.01455
պետական գրանցման
վկայականի համարը՝ 03Ա 057152

ՀՀ արդարադատության նախարարի տեղակալ, պետռեգիստրի ղեկավար՝ ________________ /Տ. Մուկուչյան/

# Կ Ա Ն Ո Ն Ա Դ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

## «Մարքեթինգի Հայկական Ասոցիացիա»

## ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ

Երևան 2002թ.

## Հոդված 1. Ընդհանուր դրույթներ

1.1. «Մարքեթինգի Հայկական Ասոցիացիա» հասարակական կազմակերպությունը (այսուհետ` Հասարակական կազմակերպություն) շահույթ ստանալու նպատակ չհետապնդող և ստացված շահույթը մասնակիցների միջև չբաշխող (ոչ առևտրային) կազմակերպության` հասարակական միավորման, տեսակ է, որում իրենց շահերի ընդհանրության հիման վրա միավորվել են ֆիզիկական անձինք` իրենց ոչ կրոնական հոգևոր կամ ոչ նյութական այլ պահանջմունքները բավարարելու, իրենց և այլոց իրավունքներն ու շահերը պաշտպանելու, հասարակությանը, նրա առանձին խմբերին նյութական և ոչ նյութական աջակցություն ապահովելու, հանրօգուտ այլ գործունեություն իրականացնելու նպատակներով:

1.2. Հասարակական կազմակերպությունն ստեղծվել է Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի (այսուհետ` Օրենսգիրք), «Հասարակական կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի (այսուհետ` Օրենք) պահանջների համապատասխան, համաձայն 14 նոյեմբերի 2002թ. հիմնադիր ժողովի որոշման և իր գործունեության ընթացքում ղեկավարվում է Օրենսգրքով, Օրենքով, այլ օրենքներով ու իրավական ակտերով և սույն կանոնադրությամբ:

1.3. Հասարակական կազմակերպության անվանումն է`

**Հասարակական կազմակերպության լրիվ անվանումն է.**

| | |
|---|---|
| հայերեն` | «Մարքեթինգի Հայկական Ասոցիացիա» Հասարակական կազմակերպություն |
| ռուսերեն` | Общественная организация «Армянская Ассоциация Маркетинга» |
| անգլերեն` | "Armenian Marketing Association" Non-Govermental Organization |

**Հասարակական կազմակերպության կրճատ անվանումն է.**

| | |
|---|---|
| հայերեն` | «Մարքեթինգի Հայկական Ասոցիացիա» ՀԿ |
| ռուսերեն` | ОО «Армянская Ассоциация Маркетинга» |
| անգլերեն` | "Armenian Marketing Association" NGO |

1.4. Հասարակական կազմակերպության գործունեության ժամկետը չի սահմանափակվում:

1.5. Հասարակական կազմակերպության գտնվելու վայրն է Հայաստանի Հանրապետություն, ք. Երևան, Կոմիտաս 23, բն.27:

## Հոդված 2. Հասարակական կազմակերպության գործունեության առարկան և ստեղծման նպատակները

2.1. Հասարակական կազմակերպությունն ստեղծվել է քաղաքացիների կամավոր միավորմամբ, որոնք միավորվել են իրենց շահերի ընդհանրության հիման վրա` հոգևոր կամ ոչ նյութական այլ պահանջմունքները բավարարելու համար:

2.2. Հասարակական կազմակերպությունը կարող է ձեռնարկատիրական գործունեություն իրականացնել միայն այն դեպքերում, երբ դա ծառայում է այն նպատակների իրականացմանը, որոնց համար նա ստեղծվել է և համապատասխանում է այդ նպատակներին: Կազմակերպությունը

ձեռնարկատիրական գործունեություն կարող է իրականացնել միայն առևտրային կազմակերպություններ ստեղծելու կամ դրանց մասնակցելու միջոցով:

2.3. Հասարակական կազմակերպության գործունեության առարկան և նպատակներն են.

Հասարակական կազմակերպության գործունեության առարկան է սահմանված կարգով.

- Հայաստանում մարքեթինգի զարգացում,
- Մարքեթինգի միջազգային սկզբունքների պրոպագանդում և փորձի տարածում Հայաստանում;
- Հայաստանի Հանրապետությունում ֆինանսական, աշխատանքային և ապրանքային շուկաների զարգացում;
- Պետական օրենսդիր և գործադիր մարմիններին աջակցում տնտեսական և սոցիալական քաղաքականության մշակման գործում;
- Մարքեթինգի սկզբունքների արդյունավետ օգտագործում որպես տնտեսական վերափոխումների մեխանիզմի;
- Հասարակական կազմակերպության անդամների և միջազգային նմանատիպ կազմակերպությունների միջև կապերի հաստատում և համագործակցություն;
- Պրոֆեսիոնալ հիմքի վրա մարքեթինգի և դրան հարակից բնագավառի մասնագետների միավորում;
- Օրենսդիր և գործադիր իշխանության մարմիններում, այլ հիմնարկներում և կազմակերպություններում Հասարակական կազմակերպության գործունեությամբ պայմանավորված մասնագիտական շահերի պաշտպանում և ներկայացնում;
- Հասարակական կազմակերպության գործունեության բնագավառում անվճար խորհրդատվության մատուցում;
- Հարակից ոլորտներում գործող հասարակական կազմակերպությունների հետ համագործակցում;
- Միջազգային կապերի զարգացում:

Հասարակական կազմակերպության գործունեության հիմնական նպատակներն են սահմանված կարգով.

- Հայաստանում մարքեթինգային գործունեության կոորդինացում հայաստանյան և արտասահմանյան կազմակերպությունների փոխհարաբերություններում;
- Մարքեթինգային ծրագրերի և հետազոտությունների կոորդինացում ֆինանսական, աշխատանքային և ապրանքային շուկաներում ու արտասահմանյան շուկաներում աշխատելու ուղեցույցների մշակում հայաստանյան կազմակերպությունների համար՝ անկախ նրանց կազմակերպա-իրավական կարգավիճակից;
- Մարքեթինգային հիմնախնդիրների վերլուծություն և գնահատում: Այդ հիմքի վրա սեփական դիրքորոշման ձևավորում;
- Հասարակական կազմակերպության գործունեության բնագավառում մասնագիտական շահերը պաշտպանելու և ներկայացնելու համար օրենսդիր

և գործադիր իշխանության մարմինների, այլ կազմակերպությունների և հիմնարկների հետ կապերի պաշտպանում;

- Հասարակական կազմակերպության նպատակներին հարող օրենսդրական դաշտի վերլուծություն և առաջարկների ու դիտողությունների մշակում;
- Մարքեթինգի բնագավառում միջազգային և ներքին փորձի հիման վրա հետազոտական ծրագրերի մշակում և իրականացում, կադրային ներուժի պահպանում;
- Մարքեթինգի բնագավառում մասնագետների վերապատրաստում, ինչպես նաև նոր մասնագետների պատրաստում և նոր աշխատատեղերի ստեղծում;
- Հասարակական կազմակերպության գործունեության ներկայացում նմանատիպ միջազգային կազմակերպություններում, արտասահմանյան գործընկերների հետ կապերի պաշտպանում, մասնագիտական փորձի և գիտելիքների փոխանակում;
- Մարքեթինգի և մենեջմենթի տարածաշրջանային կենտրոնների ստեղծմանն աջակցում;
- Փոքր և միջին ձեռնարկատիրությանն աջակցում;
- Տեղական ինքնակառավարման մարմիններին աջակցում;
- Տեղեկատվական միջոցառումների անցկացում (կոնֆերանսներ, սեմինարներ, շնորհանդեսներ, ցուցահանդեսներ), տեղական և միջազգային հրատարակումներում Հասարակական կազմակերպության հնարավորությունների և նվաճումների պրոպագանդում, գովազդում՝ համաձայն ՀՀ օրենսդրության;
- Մարքեթինգի և հարակից բնագավառների հետազոտական աշխատանքներում համագործակցության խթանում;
- Մարքեթինգի բնագավառի վերաբերյալ տեղեկատվության հավաքագրում, մշակում, պահպանում և տարածում;
- Տեղեկատվական շտեմերանների ստեղծման գործունեության կոորդինացում, որոնք ուղղված կլինեն Հասարակական Կազմակերպության գործունեության արդյունավետության բարձրացմանը;
- Մարքեթինգի բնագավառում գիտական հետազոտությունների արդյունքների ներդրմանը աջակցում;
- Մարքեթինգի բնագավառում ուսումնա-մեթոդական գործունեություն իրականացում;
- Մարքեթինգի և հարակից բնագավառների վերաբերյալ հրատարակչական գործունեության կազմակերպում, այդ թվում՝ պարբերական հրատարակումների, ինֆորմացիոն-տեղեկատվական նյութերի, գիտա-հանրամատչելի և այլ գրականության լույս ընծայում;
- Հասարակական կազմակերպության անդամների ինտելեկտուալ, ֆինանսական և կազմակերպչական կարողությունների ու ունակությունների կենտրոնացում և համախմբում դրված նպատակներն իրագործելու համար;
- Հասարակական կազմակերպության անդամներին խորհրդատվական, տեղեկատվական և այլ օգնության տրամադրում;

- Համաձայն ՀՀ օրենսդրության՝ տեղական, արտասահմանյան և միջազգային նմանատիպ կազմակերպությունների անդամակցում:
- Հայաստանի Հանրապետության գործող օրենսդրությանը չհակասող այլ գործունեության իրականացում:

## Հոդված 3. Հասարակական կազմակերպության իրավական կարգավիճակը

3.1. Հասարակական կազմակերպությունն իրավաբանական անձ է, ունի իր ինքնուրույն հաշվեկշռում արտացոլված սեփական առանձնացված գույք, կարող է իր անունից ձեռք բերել ու իրականացնել գույքային և անձնական ոչ գույքային իրավունքներ և կրել պարտականություններ, իր անունից մասնակցել գույքային շրջանառությունում և դատարանում հանդես գալ՝ որպես հայցվոր կամ պատասխանող:

3.2. Հասարակական կազմակերպությունը պետական գրանցման պահից ձեռք է բերում իրավաբանական անձի կարգավիճակ:

3.3. Հասարակական կազմակերպությունը կարող է հաշվարկային և այլ հաշիվներ բացել բանկերում: Հասարակական կազմակերպությունն ունի իր անվանմամբ կլոր կնիք, դրոշմակնիք և ձևաթղթեր:

3.4. Հայաստանի Հանրապետությունը և համայնքները պատասխանատվություն չեն կրում Հասարակական կազմակերպության պարտավորությունների համար: Հասարակական կազմակերպությունը պատասխանատվություն չի կրում Հայաստանի Հանրապետության և համայնքների պարտավորությունների համար:

3.5. Հասարակական կազմակերպությունն իր պարտավորությունների համար պատասխանատու է իրեն պատկանող ամբողջ գույքով:

3.6. Մասնակիցների՝ Հասարակական կազմակերպությանը հանձնած գույքը Հասարակական կազմակերպության սեփականությունն է: Հասարակական կազմակերպությունը պատասխանատու չէ իր մասնակիցների պարտավորությունների համար: Հասարակական կազմակերպության մասնակիցները Հասարակական կազմակերպության պարտավորությունների համար պատասխանատվություն չեն կրում:

3.7. Հասարակական կազմակերպությունն իրավունք ունի՝

- տեղեկատվություն տարածել իր գործունեության մասին,
- հիմնադրել զանգվածային լրատվության միջոցներ՝ միայն ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով,
- կազմակերպել և անցկացնել խաղաղ, առանց զենքի ժողովներ, հանրահավաքներ, երթեր և ցույցեր,
- ներկայացնել և պաշտպանել իր և իր անդամների իրավունքներն ու օրինական շահերը այլ հասարակական կազմակերպություններում, դատարանում, պետական և տեղական ինքնակառավարման մարմիններում,
- համագործակցել ոչ առևտրային այլ կազմակերպությունների, այդ թվում՝ միջազգային և օտարերկրյա ոչ կառավարական ոչ առևտրային կազմակերպությունների հետ, ինչպես նաև համակարգված գործունեություն ծավալելու, ընդհանուր շահեր ներկայացնելու և պաշտպանելու նպատակով այդ կազմակերպությունների հետ ստեղծել միություններ կամ անդամակցել նրանց ստեղծած միություններին՝ պահպանելով իր ինքնուրույնությունը և իրավաբանական անձի կարգավիճակը,
- ստեղծել ներկայացուցչություններ, մասնաճյուղեր և հիմնարկներ,
- ստեղծել առևտրային կազմակերպություններ կամ մասնակից դառնալ այդպիսի կազմակերպություններին,

- իրականացնել ՀՀ օրենքներով չարգելված այլ գործունեություն:

3.8. Հասարակական կազմակերպությունը կարող է անդամակցել միջազգային հասարակական կազմակերպությունների, ունենալ միջազգային կապեր, կնքել համաձայնագրեր օտարերկրյա ոչ առևտրային ոչ կառավարական կազմակերպությունների հետ:

3.9. Օտարերկրյա պետություններում տնտեսական ընկերություններ, ներկայացուցչություններ, մասնաճյուղեր և հիմնարկներ հիմնադրելը և (կամ) դրանց մասնակցելը կատարվում է դրանց գտնվելու վայրի երկրի օրենքներին և այլ իրավական ակտերին համապատասխան, եթե այլ բան նախատեսված չէ ՀՀ միջազգային պայմանագրերով:

3.10. Հասարակական կազմակերպությունը պարտավոր է.

- ցանկացած ֆիզիկական անձի պահանջով՝ ողջամիտ ժամկետում, բայց ոչ ավելի, քան 7 օրացուցային օրվա ընթացքում, նրան հնարավորություն տալ ծանոթանալու կազմակերպության կանոնադրությանը,
- օրենքով սահմանված կարգով վարել գործավարություն և հաշվապահական հաշվառում,
- վարել իր անդամների հաշվառում,
- իր գործունեության և գույքի օգտագործման հաշվետվությունները ներկայացնել կազմակերպության ժողովի հաստատմանը ոչ պակաս, քան երկու տարին մեկ անգամ՝ ապահովելով այդ հաշվետվությունների հրապարակայնորեն մատչելի լինելը,
- օրենքով նախատեսված դեպքերում և կարգով տեղեկատվություն ու հաշվետվություններ ներկայացնել պետական մարմիններ,
- պետական լիազորված մարմնի պատճառաբանված պահանջով ողջամիտ ժամկետում նրան տրամադրել կազմակերպության ժողովի, նախագահի և տնօրենի որոշումների պատճենները, կազմակերպության գործունեության մասին այլ փաստաթղթեր, թույլատրել այդ մարմնի ներկայացուցիչներին ներկա գտնվելու կազմակերպության ժողովին,
- կազմակերպության նախագահի և տնօրենի և (կամ) կազմակերպության գտնվելու վայրի հասցեի փոփոխման դեպքում, 14 օրացուցային օրվա ընթացքում, պետական գրանցման մարմին ուղարկել նշված անձի անձնագրային տվյալները և (կամ) կազմակերպության գտնվելու վայրի նոր հասցեի մասին տեղեկությունները:

## Հոդված 4. Հասարակական կազմակերպության մասնաճյուղերը, ներկայացուցչությունները և հիմնարկները

4.1. Հասարակական կազմակերպությունն իրավունք ունի Օրենսգրքի, Օրենքի և այլ օրենքների ու իրավական ակտերի պահանջներին համապատասխան ստեղծել մասնաճյուղեր, ներկայացուցչություններ և հիմնարկներ:

4.2. Ներկայացուցչությունը Հասարակական կազմակերպության գտնվելու վայրից դուրս տեղակայված նրա առանձնացված ստորաբաժանումն է, որը ներկայացնում է Հասարակական կազմակերպության շահերը և իրականացնում է դրանց պաշտպանությունը:

4.3. Մասնաճյուղը Հասարակական կազմակերպության գտնվելու վայրից դուրս տեղակայված նրա առանձնացված ստորաբաժանումն է, որն իրականացնում է նրա բոլոր գործառույթները կամ դրանց մի մասը՝ ներառյալ ներկայացուցչության գործառույթները:

4.4. Ներկայացուցչությունները, մասնաճյուղերը և հիմնարկները իրավաբանական անձինք չեն և գործում են Հասարակական կազմակերպության հաստատած կանոնադրության հիման վրա:

4.5. Ներկայացուցչությունների, մասնաճյուղերի և հիմնարկների գույքը տրամադրվում է Հասարակական կազմակերպության կողմից: Ներկայացուցչությունների, մասնաճյուղերի և հիմնարկների գույքը հաշվառվում է ինչպես դրանց առանձին հաշվեկշիռներում, այնպես էլ Հասարակական կազմակերպության հաշվեկշռում և համարվում է Հասարակական կազմակերպության սեփականությունը:
4.6. Ներկայացուցչությունների, մասնաճյուղերի և հիմնարկների ղեկավարները նշանակվում են Հասարակական կազմակերպության կողմից ու գործում են նրա կողմից տրված լիազորագրի հիման վրա:
4.7. Ներկայացուցչությունների, մասնաճյուղերի և հիմնարկների գործունեության համար պատասխանատվություն է կրում Հասարակական կազմակերպությունը:

## Հոդված 5. Հասարակական կազմակերպության սեփականությունը

5.1. Հասարակական կազմակերպությունը, որպես սեփականություն, կարող է ունենալ շենքեր, շինություններ, սարքավորումներ, դրամական միջոցներ՝ արժեթղթեր և այլ գույք:
5.2. Հասարակական կազմակերպության գույքի արժեքն արտացոլվում է Հասարակական կազմակերպության հաշվեկշռում:
5.3. Հասարակական կազմակերպության գույքի ձևավորման աղբյուրներն են.

- դրամաշնորհները,
- նվիրատվությունները,
- սահմանված կարգով իրականացված գործունեությունից և օրենքով չարգելված այլ, այդ թվում՝ օտարերկրյա աղբյուրներից միջոցները:

5.4. Հասարակական կազմակերպության մասնակիցներից գանձվում են անդամավճարներ:
5.5. Հասարակական կազմակերպությունն իրեն պատկանող գույքը տիրապետում, օգտագործում և տնօրինում է իր նպատակների իրականացման համար:
5.6. Հասարակական կազմակերպության անդամները կազմակերպությանը որպես սեփականություն հանձնած գույքի նկատմամբ իրավունքներ չունեն:
5.7. Հասարակական կազմակերպության գույքը չի կարող բաշխվել նրա անդամների միջև:

## Հոդված 6. Հասարակական կազմակերպության մասնակիցները: Անդամագրվելու և անդամությունից դուրս գալու կարգը

6.1. Հասարակական կազմակերպության մասնակից (անդամ) կարող են լինել ՀՀ, ինչպես նաև օտարերկրյա պետությունների ցանկացած քաղաքացի և քաղաքացիություն չունեցող ցանկացած անձ, որն ընդունում է Հասարակական կազմակերպության կանոնադրությունը, նրա նպատակները և խնդիրները, ցանկանում է մասնակցել նրա գործունեությանը: Հասարակական կազմակերպությանն անդամագրվում են գրավոր դիմումի համաձայն և Հասարակական կազմակերպության տնօրենի որոշմամբ:
6.2. Հայաստանի Հանրապետությունը, համայնքները, ինչպես նաև իրավաբանական անձինք, չեն կարող լինել Հասարակական կազմակերպության մասնակից:
6.3. Հասարակական կազմակերպության հիմնադիրներից յուրաքանչյուրը կազմակերպության ստեղծումից հետո կազմակերպության անդամ է այնպիսի իրավունքներով ու պարտականություններով, ինչպիսիք ունեն կազմակերպության մյուս անդամները:

6.4. Մինչև 14 տարեկան անչափահասը կազմակերպությանը կարող է անդամագրվել իր ցանկությամբ՝ օրինական ներկայացուցչի դիմումի հիման վրա: 14-ից մինչև 18 տարեկան անչափահասը, եթե օրենքով սահմանված կարգով լրիվ գործունակ չի ճանաչված, կազմակերպությանը կարող է անդամագրվել իր դիմումի հիման վրա՝ օրինական ներկայացուցչի գրավոր համաձայնությամբ: Կազմակերպության անչափահաս անդամներն ունեն նույն իրավունքներն ու պարտականությունները, ինչ կազմակերպության չափահաս անդամները:

6.5. Անձի անդամակցությունը կազմակերպությանը նրա իրավունքների և ազատությունների սահմանափակման հիմք չէ:

6.6. Հասարակական կազմակերպության անդամն իրավունք ունի.

- ներկա գտնվել Հասարակական կազմակերպության ժողովներին,
- ծանոթանալ Հասարակական կազմակերպության մարմինների աշխատանքի արձանագրման մասին փաստաթղթերին, ստանալ նրանց ընդունած որոշումների պատճենները,
- օրենքով սահմանված կարգով բողոքարկել կազմակերպության մարմինների որոշումները,
- ազատ դուրս գալ Հասարակական կազմակերպության անդամությունից,
- իրականացնել Օրենսգրքով, Օրենքով, այլ օրենքներով նախատեսված այլ իրավունքներ:

6.7. Հասարակական կազմակերպության անդամը պարտավոր է.

- անվերապահորեն կատարել սույն կանոնադրության և Հասարակական կազմակերպության մարմինների որոշումների պահանջները;
- հոգ տանել Հասարակական կազմակերպության հեղինակության բարձրացման համար;
- կատարել Օրենսգրքով, Օրենքով, այլ օրենքներով նախատեսված այլ պարտավորություններ:

6.8. Հասարակական կազմակերպության անդամը կարող է դուրս գալ կազմակերպության անդամությունից կամավոր՝ սեփական դիմումի համաձայն, ինչպես նաև կանոնադրական պահանջները խախտելու, Հասարակական կազմակերպության աշխատանքներին ակտիվորեն չմասնակցելու, ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքում Հասարակական կազմակերպության անդամը տնօրենի որոշմամբ կարող է հեռացվել անդամությունից:

## Հոդված 7. Հասարակական կազմակերպության ժողովը

7.1. Հասարակական կազմակերպության կառավարման բարձրագույն մարմինը Հասարակական կազմակերպության ժողովն է, որն ունի Հասարակական կազմակերպության գործունեությանն առնչվող ցանկացած հարցի վերջնական լուծման վերաբերյալ որոշում ընդունելու իրավունք: Կազմակերպության ժողովը կարող է լինել հերթական կամ արտահերթ:

7.2. Հասարակական կազմակերպության հերթական ժողովը հրավիրվում է երկու տարին մեկ անգամ՝ մասնակիցների համատեղ հավաքի ձևով կամ հեռակա կարգով՝ հեռահաղորդակցության միջոցները օգտագործելու, քննարկվող փաստաթղթերը առաքելու միջոցով: Հասարակական կազմակերպության հերթական ընդհանուր ժողովը հրավիրվում է նախագահի կողմից:

7.3. Հասարակական կազմակերպության ժողովին մասնակցի կողմից տրված լիազորագրի հիման վրա կարող է մասնակցել վերջինիս պատվիրակը:

7.4. Հասարակական կազմակերպության ժողովի օրակարգի, նրա աշխատանքները սկսելու տեղի, օրվա ու ժամի մասին մասնակիցները ծանուցվում են պատվիրված նամակով ոչ ուշ, քան ժողովի անցկացման օրվանից 15 օր առաջ:

7.5. Հասարակական կազմակերպության անդամների մեկ երրորդի կամ կազմակերպության վերստուգողի պատճառաբանված պահանջի դեպքում, ոչ ուշ, քան 14 օրացուցային օրվա ընթացքում, հրավիրվում է կազմակերպության արտահերթ ժողով, որի օրակարգի, անցկացման տեղի, օրվա ու ժամի մասին մասնակիցները պետք է ծանուցվեն պատվիրված նամակով, ոչ ուշ, քան այդ արտահերթ ժողովի անցկացման օրվանից 3 օր առաջ:

7.6. Հասարակական կազմակերպության ժողովն իրավազոր է, եթե ժողովի մասնակիցների թիվն ավելի է բոլոր անդամների կամ բոլոր պատվիրակների ընդհանուր թվի կեսից:

7.7. Հասարակական կազմակերպության ընդհանուր ժողովի իրավասությանն են պատկանում՝

ա) Հասարակական կազմակերպության գործունեության երկարաժամկետ ծրագրերի քննարկումը և հաստատումը;

բ) Հասարակական կազմակերպության կանոնադրության մեջ փոփոխությունների և լրացումների կատարումը, Հասարակական կազմակերպության նոր կանոնադրության հաստատումը,

գ) Հասարակական կազմակերպության գործունեության և գույքի օգտագործման հաշվետվությունների հաստատումը,

դ) Հասարակական կազմակերպության նախագահի (տնօրենի) և վերստուգողի ընտրությունը, լիազորությունների վաղաժամկետ դադարեցումը,

ե) Հասարակական կազմակերպության վերակազմակերպման մասին որոշման ընդունումը, գույքի փոխանցման ակտի կամ բաժանիչ հաշվեկշռի հաստատումը, բացի դատարանի վճռով վերակազմակերպումից,

զ) Հասարակական կազմակերպության լուծարման մասին որոշման ընդունումը, բացի դատարանի վճռով լուծարումից:

7.9. Հասարակական կազմակերպության ժողովը չի կարող իր բացառիկ իրավասության հարցերի վերաբերյալ որոշում ընդունելու իրավունքը փոխանցել կազմակերպության այլ մարմնի:

7.10. Հասարակական կազմակերպության բացառիկ իրավասության ենթահարցերի վերաբերյալ ընդհանուր ժողովը որոշում է կայացնում Հասարակական կազմակերպության բոլոր անդամների կամ պավիրակների ձայների երկու երրորդով: Մնացած հարցերի վերաբերյալ ընդհանուր ժողովը որոշում է կայացնում ընդհանուր ժողովին մասնակցող անդամների ձայների պարզ մեծամասնությամբ:

7.11. Հասարակական կազմակերպության գործունեության կամ կազմակերպության ժողովի ընթացքում օրենսդրությամբ կամ կանոնադրությամբ չկանոնակարգված իրադրություն առաջանալու դեպքում հարցերը լուծվում են ժողովի որոշմամբ:

## Հոդված 8. Հասարակական կազմակերպության նախագահը

8.1. Հասարակական կազմակերպության նախագահն ընտրվում է Հասարակական կազմակերպության ժողովում երկու տարի ժամկետով:

8.2. Հասարակական կազմակերպության նախագահի իրավասության ներքո է՝

- Հասարակական կազմակերպության գործունեության հիմնական ուղղությունների որոշումը,
- Հասարակական կազմակերպության ժողովների միջև ընկած ժամանակահատվածում Հասարակական կազմակերպության գործունեության վերաբերյալ այնպիսի որոշումների կայացումը, որոնք չեն վերաբերում ժողովի բացառիկ իրավասությանը,
- առաջարկությունների ձևավորումը և ներկայացումը Հասարակական կազմակերպության ժողովում,

- Հասարակական կազմակերպության նպատակային ծրագրերի հաստատումը և ֆինանսական հնարավոր աղբյուրների որոշումը,
- Հասարակական կազմակերպության ժողովի որոշումների իրականացնումը:
- Հասարակական կազմակերպության ժողովի աշխատանքների կազմակերպումը,
- օրենսդիր և գործադիր իշխանության մարմիններում, միջազգային և արտասահմանյան կազմակերպություններում Հասարակական կազմակերպության ներկայացնելը,
- Հասարակական կազմակերպության բյուջեի կատարման կազմակերպումը,
- գույք ձեռք բերելու, տիրապետելու, օգտագործելու, տնօրինելու, այդ թվում՝ օտարելու և դուրս գրելու վերաբերյալ որոշումների ընդունումը,
- Հասարակական կազմակերպության անունից գործարքների, պայմանագրերի, համաձայնագրերի կնքումը և այլ փաստաթղթերի վավերացումը,
- Հասարակական կազմակերպության առանձնացված ստորաբաժանումների աշխատանքների համակարգումը,
- Հասարակական կազմակերպության ներկայացուցչությունների, մասնաճյուղերի, հիմնարկների ստեղծման և կազմալուծման, ղեկավարների նշանակման մասին որոշումներ կայացնելը,
- հաստիքային աշխատողների նշանակումը,
- լիազորագրեր տալը,
- Հասարակական կազմակերպության ֆինանսական փաստաթղթերի վավերացումը,
- Հասարակական կազմակերպության ժողովի որոշումների իրականացումը,
- Հասարակական կազմակերպության ընթացիկ պլանների մշակումը և իրականացումը,
- Հասարակական կազմակերպության փաստաթղթերի (կառավարչական, ֆինանսատնտեսական և այլն) պահպանումը:

8.4. Հասարակական կազմակերպության նախագահն իրավասու է ներկայացնել կազմակերպությանն առանց լիազորագրի:

8.5. Հասարակական կազմակերպության մարմինների գործունեությունը կարող է բողոքարկվել Հասարակական կազմակերպության անդամների կամ նրանց պատվիրարկների կողմից: Հասարակական կազմակերպության մարմինների գործունեության բողոքարկումն իրականացվում է գրավոր դիմում ներկայացնելու միջոցով, որը քննարկվում է Հասարակական կազմակերպության անդամների կողմից արտահերթ կամ հերթական ժողովներ հրավիրելու միջոցով: Հասարակական կազմակերպության բարձրագույն մարմնի կողմից ընդունված որոշումները բողոքարկվում են «Հասարակական կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի 2-րդ կետով սահմանված կարգով:

## Հոդված 9. Հասարակական կազմակերպության ֆինանսատնտեսական գործունեության վերահսկման կարգը

9.1. Հասարակական կազմակերպության գործունեության վերահսկումն իրականացվում է վերստուգողի կողմից: Վերստուգողը ընտրվում է Հասարակական կազմակերպության ընդհանուր ժողովում երկու տարի ժամանակով: Վերստուգողը հաշվետու է Հասարակական կազմակերպության ժողովին:

9.2. Հասարակական կազմակերպության գործունեության և գույքի օգտագործման վերաբերյալ հաշվետվությունները ժողովի հաստատմանն են ներկայացվում դրանց վերաբերյալ վերստուգողի եզրակացության հետ մեկտեղ:

9.3. Հասարակական կազմակերպության վերստուգողն իրավասու է.

- ցանկացած ժամանակ անցկացնել կազմակերպության ֆինանսատնտեսական գործունեության ստուգում,

- ծանոթանալ կազմակերպության գործունեությանն առնչվող բոլոր փաստաթղթերին,
- կազմակերպության պաշտոնատար անձանցից, անդամներից ու աշխատողներից պահանջել և ստանալ գրավոր կամ բանավոր տեղեկատվություն,
- իրականացնել ժողովի որոշումներից բխող այլ լիազորություններ:

9.4. Հասարակական կազմակերպության վերստուգողը պարտավոր է պահանջել արտահերթ ընդհանուր ժողովի գումարում, եթե

- Հասարակական կազմակերպության շահերին վտանգ է սպառնում;
- հայտնաբերվել են Հասարակական կազմակերպության պաշտոնատար անձանց կողմից կատարված չարաշահումներ:

9.5. Հասարակական կազմակերպության վերստուգողի ծախսերի հատուցման կարգը սահմանում է նախագահը:

9.6. Վերստուգողի կողմից որոշումներն ընդունվում են միանձնյա:

9.7. Հասարակական կազմակերպության ֆինանսատնտեսական գործունեությունը վերստուգելու նպատակով տնօրենի որոշմամբ կարող է ներգրավվել աուդիտոր:

9.8. Հասարակական կազմակերպության կողմից օրենքների պահանջների կատարման նկատմամբ վերահսկողությունն իրականացվում է պետական լիազորված մարմինը, իսկ օրենքով սահմանված դեպքերում նաև այլ իրավասու պետական մարմինները՝ իրենց իրավասությունների և ստուգումների ու ուսումնասիրությունների՝ օրենքով նախատեսված ընթացակարգին համապատասխան:

## Հոդված 10. Հաշվապահական հաշվառումը և ֆինանսական հաշվետվությունը

10.1. Հասարակական կազմակերպությունը ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով վարում է հաշվապահական հաշվառում և ներկայացնում ֆինանսական ու վիճակագրական հաշվետվություններ:

10.2. Հասարակական կազմակերպության նախագահը պատասխանատվություն է կրում Հասարակական կազմակերպության հաշվապահական հաշվառման կազմակերպման վիճակի և դրա հավաստիության, տարեկան հաշվետվությունը, ֆինանսական և վիճակագրական հաշվետվությունները պետական մարմիններին ժամանակին ներկայացնելու, ինչպես նաև Հասարակական կազմակերպության պարտատերերին և զանգվածային լրատվության միջոցներին Հասարակական կազմակերպության մասին տրամադրվող տեղեկությունների համար:

## Հոդված 11. Աշխատանքային հարաբերություններ

11.1. Հասարակական կազմակերպության աշխատակիցների և Հասարակական կազմակերպության միջև աշխատանքային հարաբերությունները կարգավորվում են աշխատանքային և քաղաքացիական օրենսդրության նորմերով և կարող են ձևակերպվել ինչպես աշխատանքային, այնպես էլ վճարովի ծառայությունների մատուցման քաղաքացիիրավական պայմանագրերի ձևով:

11.2. Հասարակական կազմակերպությունն իրավունք ունի աշխատողներ ներգրավել համատեղության կարգով:

11.3. Հասարակական կազմակերպությունն ինքն է որոշում աշխատողներին աշխատանքի ընդունելու և աշխատանքից ազատելու կարգը, աշխատանքի վարձատրության ձևը և չափը, աշխատանքային օրվա ռեժիմը, հանգստյան օրերը և արձակուրդ տրամադրելու կարգը:

11.4. Հասարակական կազմակերպության գործունեության անձնական աշխատանքով մասնակցող անդամները վարձատրվում են Հասարակական կազմակերպության մյուս աշխատակիցների հետ հավասար պայմաններով:

## Հոդված 12. Հասարակական կազմակերպության կանոնադրության մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու կարգը

12.1. Հասարակական կազմակերպության կանոնադրության փոփոխությունները և լրացումները կամ նոր կանոնադրության հաստատումը հանդիսանում է կազմակերպության ժողովի բացառիկ իրավասությունը:
12.2. Հասարակական կազմակերպության կանոնադրության փոփոխությունները և լրացումները կամ նոր կանոնադրությունը ենթակա է պետական գրանցման և ուժի մեջ են մտնում պետական գրանցման պահից:

## Հոդված 13. Հասարակական կազմակերպության վերակազմակերպումը

13.1. Հասարակական կազմակերպության վերակազմակերպումը (միաձուլում, միացում, բաժանում, առանձնացում, վերակազմավորում) կատարվում է ժողովի որոշմամբ: Կազմակերպության վերակազմակերպումը դատական կարգով հնարավոր է միայն օրենքով նախատեսված դեպքերում և կարգով:
13.2. Հասարակական կազմակերպությունը կարող է միաձուլվել այլ կազմակերպության (կազմակերպությունների) հետ: Հասարակական կազմակերպությունը կարող է միանալ այլ կազմակերպության: Նրան կարող է (են) միանալ այլ կազմակերպություն (կազմակերպություններ): Կազմակերպությունը կարող է բաժանվել այլ կազմակերպությունների: Կազմակերպությունից կարող է (են) առանձնանալ կազմակերպություն (կազմակերպություններ): Կազմակերպությունը կարող է վերակազմավորվել հասարակական միավորման որևէ այլ կազմակերպական-իրավական տեսակի կամ հիմնադրամի:
13.3. Հասարակական կազմակերպությունը վերակազմակերպված է համարվում՝ բացառությամբ միացման միջոցով վերակազմակերպման դեպքերի, վերակազմակերպման արդյունքում նոր ստեղծված իրավաբանական անձանց պետական գրանցման պահից:
13.4. Հասարակական կազմակերպությունն այլ իրավաբանական անձի միանալու միջոցով վերակազմակերպման դեպքում վերակազմակերպված է համարվում իրավաբանական անձանց պետական գրանցումն իրականացնող մարմնի կողմից Հասարակական կազմակերպության գործունեությունը դադարելու գրառում կատարելու պահից:
13.5. Վերակազմակերպման արդյունքում ստեղծված իրավաբանական անձանց պետական գրանցումը և վերակազմակերպման արդյունքում գործունեությունը դադարեցրած Հասարակական կազմակերպության գործունեության դադարման մասին գրառումը կատարվում է օրենքով սահմանված կարգով իրավաբանական անձանց պետական գրանցումն իրականացնող լիազոր մարմնի կողմից:

## Հոդված 14. Հասարակական կազմակերպության լուծարումը

14.1. Հասարակական կազմակերպության լուծարումը հանգեցնում է Հասարակական կազմակերպության դադարմանն առանց Հասարակական կազմակերպության իրավունքների և պարտականությունների իրավահաջորդության կարգով այլ անձանց փոխանցելու: Կազմակերպությունը համարվում է լուծարված, իսկ նրա գործունեությունը՝ դադարած, նրա գործունեության դադարման պետական գրանցման պահից:



14.2. Հասարակական կազմակերպությունը կարող է լուծարվել կամավոր՝ ժողովի որոշմամբ և հարկադիր՝ պետական լիազորված մարմնի պահանջով և միայն օրենքով սահմանված հիմքերի առկայության դեպքում, դատարանի որոշմամբ:
14.3. Հասարակական կազմակերպության լուծարումն իրականացվում է իրավաբանական անձանց լուծարման օրենսդրությամբ սահմանված կարգով և պայմաններով:
14.4. Հասարակական կազմակերպությունը լուծարվելու դեպքում պարտատերերի պահանջները բավարարելուց հետո մնացած գույքն ուղղվում է կազմակերպության կանոնադրությամբ նախատեսված նպատակներին, իսկ դրա անհնարինության դեպքում փոխանցվում է պետական բյուջե:
14.5. Հասարակական կազմակերպության լուծարման մասին ժողովի, այլ մարմինների ու լուծարման հանձնաժողովի՝ լուծարման գործընթացին վերաբերող որոշումները, դրանք կայացնելուց հետո՝ 10-օրյա ժամկետում, կազմակերպության ցանկացած անդամ բողոքարկելու իրավունք ունի: Այդ դեպքում դատարանը կարող է իր որոշմամբ կասեցնել վիճարկվող որոշման կատարման ընթացքը՝ մինչև գործի դատական քննության ավարտը: